

... Պատերազմի նոր կերպ է պարտադրվել մեզ: Սա Հայաստանի՝ Կովկասում մնալ-չմնալու հարցն է: Հարցն այսպես է դրված: Եթե մենք ուզում ենք լինել Կովկասի իրավահավասար ազգերից մեկը, մենք պարտավոր ենք չպարտվել, պարտվելու իրավունք չունենք և չպիտի պարտվենք: Բայց ամեն օր պարտություն է, ամեն օր փախուստ է...

Երկուշաբթի
31 հունվարի 2022թ.
№ 2 (568)

ՀԻՍՏՈՐԻԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ
ՊԱՏԱՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Կյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
2 2 0 0 2 >
9 771829 346006

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Հազար խոշոր հարկատուների ցանկը. այն գլխավորում է Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը

Հարկային մարմնի կողմից հրապարակվել է 2021 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի վերաբերյալ տեղեկատվությունը: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում է Պետական եկամուտների կոմիտեն:

1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2021թ. 12 ամիսների ընթացքում պետական բյուջե ընդհանուր առմամբ

վճարվել է ավելի քան 1 տրիլիոն 206 մլրդ դրամ: Հարկային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 989 մլրդ 980 մլն դրամ, իսկ մաքսային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 216 մլրդ 881 մլն դրամ: 1000 խոշոր հարկ վճարողների ցուցակը գլխավորում է «Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ»-ը (48,842,019): Թվով երկրորդ խոշոր հարկատուն «Գազպրոմ Ամենիա»-ն է (47,825,132): Տասնյակում տեղ են գտել նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանույթ-

յան նախարարության աշխատակազմ»-ը (42,656,806), «Գրանո Տոբակո»-ն (42,157,046), «Գեոպրոմայնիկ գոլդ»-ը (20,839,147), «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ»-ը (20,235,400), «Սիփիես օիլ»-ը (18,139,549), «ՄՏՍ Հայաստան»-ը (15,715,402), «Ֆլեշ»-ը (15,482,097) և «Թեղուտ»-ը (15,325,378): Ցանկը հրապարակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչները, մասնավորապես՝ ցանկում ներառվել են պետական և համայնքային կառավարչական հիմնարկները: //

Հայաստանը պետք է կապ ունենա Ղարաբաղի հետ

Ռուսաստանի խաղաղապահները, գեներալ Ռուստամ Մուրադովը զբաղվում են հայ գերիների հարցով: Սակայն քանի հայ գերի կա Ադրբեջանում այսօր՝ հայտնի չէ, ինչպես նաև հայտնի չէ՝ երբ են հայ գերիները վերադառնալու տուն: Այդ մասին անցած տարվա ամփոփմանը նվիրված ասուլիսի ժամանակ հայտարարեց Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը:



բաղը Ռուսաստանի կազմում ներառելու հարց «մոտիկ անգամ չկա» Մոսկվայի օրակարգում: Պատասխանելով ադրբեջանցի լրագրողի հարցին՝ արդյոք հայաստանցի պաշտոնյա-

ներն իրավունք ունեն այցելել Ղարաբաղ և այնտեղ հայտարարություններ անել, Լավրովն ասաց, որ Հայաստանը պետք է կապ ունենա Ղարաբաղի հետ, և սա այն հարցն է, որ երբեք չի քննարկվել: Ակնհայտ է, որ այդ կապը պետք է լինի, և հայաստանցի պաշտոնյաները, որոնք ներգրավված են նաև Ղարաբաղում հումանիտար գործընթացներում, Ղարաբաղ այցելելու իրավունք ունեն, հենց դրա համար գոյություն ունի Լաչինի միջանցքը: Այլ հարց է, որ հավանաբար պետք չէ էմոցիոնալ հայտարարություններ անել Ստեփանակերտում, հավելեց Ռուսաստանի արտգործնախարարը՝ վերհիշելով Հայաստանի պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի «նոր պատերազմ՝ նոր տարածքներ» հայտարարությունը, հայկական կողմին ըստ էության անուղղակի մեղադրելով պատերազմը հրահրելու մեջ: Լավրովի խոսքով՝ Հայաստանում այսօր չկան ադրբեջանցի գերիներ, իսկ Ադրբեջանում կան հայ գերիներ, և նման իրավիճակ է ստեղծվել այն պատճառով, որ դեկտեմբերի սկզբին հայկական կողմը հնարավոր գերիների մասին նոր ցուցակ է ներկայացրել: «Գերիների վերադարձի հարցը մանրամասն քննարկվել է հունվարի 11-ին, երկար քննարկումներ են եղել: Ի սկզբանե հայկական և ադրբեջանական կողմերը պետք է ներկայացնեին անհետ կորածների ցուցակներ: **Շարունակությունը՝ էջ 3**

Հրանտ Մաթևոսյան

Մենք այստեղ պիտի ճախրենք ու մանք, Թե մահ կա, այստեղ պիտի մահանանք...

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Հայոց բանակը 30 տարեկան է. այն նորից կլինի ամենամարտունակը, նորից կլինի մեր ազգային հպարտությունը



Հայոց բանակի հիմնը

Երգի իմ երկիր հայրենի, Հոգսերդ շատ, հույսդ մեծ, Զարքարոտ երկիր:

Ես մի բուռն եմ քո հողի, Ես մի ծիլն եմ քո արտի, Ես մի թերթն եմ քո ծաղկի, Հայրենի երկիր, Հայաստան:

Երգի իմ երկիր հայրենի, Հոգսերդ շատ, հույսդ մեծ, Արծվաբուն երկիր:

Իմ պապերն են քեզ շահել, Իմ եղբայրքն են քեզ պահել, Քոն են նորոգել իմ շահել, Հայրենի երկիր, Հայաստան:

ԵՐԱՅԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՌՈՒԲԵՏՑ ԱՄԻՌԱՆԱՅԱՆ



Նիկոլ Փաշինյանը հունվարի 24-ի ասուլիսում պատասխանել է «Սյունյաց երկրի» հարցին

Սամվել Ալեքսանյան

– Պարոն վարչապետ

Անկախության տարիներին երկու-երեք ծրագիր առաջ բաշվեց՝ Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման համար՝ Ադրբեջանի տարածքը շրջանցող:

Ինչո՞ւ այդ ծրագրերն այդպես էլ կյանքի չկոչվեցին՝ առաջնությունը գիշերով Երասխ-Ջուլֆա-Իրան երկաթգծին, և արդյո՞ք Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը (այդ ծրագրերով) այլևս հրատապություն չի ներկայացնում:

Նիկոլ Փաշինյան

– Խոսքն այն մասին է, որ Արարատյան դաշտից երկաթուղին Կայրոց Ձորի և Սյունիքի մարզերով հասնի Իրանի Իսլամական Հանրապետության: Պատկերացնում եք, չէ՞, խոսքն ինչ ռեյիտեֆի մասին է, և ի՞նչ ռեյիտեֆի հետ գործ ունենք: Եվ պատկերացնում եք, չէ՞, Նույնիսկ հարթ տարածությունով երկաթուղի կառուցելն ինչպիսի՞ ծախսերի հետ է կապված: Դա մի քանի միլիարդ դոլարանոց ծրագիր է: Գումարի մասին է խոսքը, բա տարիները: Կարող եմ ասել, որ այդպիսի ծրագրերն առանց տնտեսական հիմնավորվածության չեն իրագործվում: Ո՞րն է այս դեպքում տնտեսական հիմնավորվածությունը: Տնտեսական հիմնավորվածությունն այն է, որ եթե ծախս արվի, պիտի այդ ծախսերը դուրս գան, բայց դա տեղի չի ունենում: Վարչապետի պաշտոնը ստանձնելով՝ ուսումնասիրել եմ թեման, թե ի՞նչ է արվել այդ ուղղությամբ, և կարող եմ ասել, որ եթե չեն սխալվում ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունից առաջ այդ թեմայի շուրջ հետաքննություն է սկսվել, որովհետև այդտեղ ինչ-որ գործողություններ են արվել, և ավելի շատ տպավորություն կար, թե դա որոշակի, այսպես ասած, մեթենայություն է, բան իրական ծրագիր, այսինքն՝ պիտի գիտակցենք, որ ամեն ինչ չէ, որ աս-



վում է, իրագործելի է:

Տաթևիկ Դանիելյան (լրագրող)

– Այս ծրագիրը՝ Երասխ-Ջուլֆա-Մեղրի-Յորդանի երկաթուղին որքանո՞վ է իրատեսական, և որտեղի՞ց կարող ենք միջոցներ ներգրավել և ի՞նչ ժամանակվա:

Նիկոլ Փաշինյան

– Նախ՝ Երասխ-Ջուլֆա-Օրդուբադ-Մեղրի-Յորդանի երկաթուղու մասին է խոսքը: Բոլորսեյից հետո ես հայտարարեցի, որ մենք Ադրբեջանի Նախագահի հետ այդ հարցում համաձայնություն ենք ձեռք բերել, որ պիտի սկսենք այդ երկաթուղու կառուցումը: Ի դեպ, իմ որոշմամբ աշխատանքային խումբ է ստեղծվել, այս դեպքում այն հատվածները, որ մենք պիտի կառուցենք, առնվազն, տասնյակ անգամ ավելի էժան է, քան այն, ինչի մասին մենք խոսում ենք, որովհետև մեծ բարդություն չեն տեսնում, որ նախնական գնահատա-

կանով 200 միլիոն դոլար և հինգ միլիոն դոլար ներդրման մասին է, և դա Հայաստանի համար շատ ծանր և մեծ բեռ չէ: Կան եվրոպական ընկերություններ, ովքեր հետաքրքրված են և պատրաստ են գալ և՛ ներդրում անել, և՛ շահագործել: Լաև պատրաստ են ֆինանսավորել, այսինքն՝ սա այն պարագան չէ, որը կարող է ֆինանսական խնդիր առաջացնել: Գործնականում մենք արդեն համաձայնությունը թողի վրա արձանագրել, այդ երկաթուղու կառուցման նախապատրաստական աշխատանքները սկսված են, և, ընդ որում՝ ուզում եմ մի նրբություն մասին էլ խոսել, որ եթե տեսականորեն Հայաստան-Իրան երկաթուղին Հայաստանն ու Իրանն էր իրար հետ կապելու, այս սցենարով երկաթուղին Հայաստանը կապում է Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության

հետ: Եթե ընդհանրապես մեզ հաջողվի հասնել տարածաշրջանային կոմունիկացիաների, այդ դեպքում Հայաստան-Թուրքիա սահմանի բացմանը, սա նշանակում է, որ Հայաստանը եվրոպայի, Ռուսաստանի, Իրանի, Հինաստանի հետ ստանում է երկաթուղային կապ՝ սրանից բխող տնտեսական բոլոր հետևանքներով: Մենք սա նկատի ունենք խաղաղության օրակարգ ասելով: Մենք նախկինում էլ այս թեմային անդրադարձել ենք: Սկզբից մենք դա ձևակերպեցինք այսպես՝ թշնամության մթնոլորտի կառավարում: Իսկ ի՞նչ է դա նշանակում: Դա նշանակում է կոմունիկացիաների բացում, օրինակ, որ բեռներն անցնեն Հայաստանով, Ադրբեջանով, որի համար և՛ Հայաստանին, և՛ Ադրբեջանին տրանզիտային վճարներ վճարվեն: Իրականում կոմունիկացիաների բացման թեմայի մասին խոսելիս մենք կենտրոնանում ենք Նախիջևանի Ինքնավար Հանրապետության ու Ադրբեջանի միջև կապի վրա: Դա գուցե հարցի զգայուն, բայց ոչ ամենակարևոր կողմն է: Ի վերջո և Հայաստանի համար, նաև Ադրբեջանի համար տրանզիտային հսկայական հոսքերի մասին է խոսքը, որովհետև այստեղ հարց կարող է ծագել, մենք նախկինում միշտ կենտրոնանում էինք այդ խնդրի վրա, ես էլ նախկինում ուշադրությունը իրավիճակի վրա, որ Ադրբեջանը կապ է ստանում Նախիջևանի հետ, իսկ Հայաստանի Հանրապետությունը՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հետ: Բայց, կներեք, զուտ այս հատվածը չէ կոմունիկացիաների թեման, որովհետև եթե այդ ծանապարհները բացվեն, հսկայական տրանզիտային հոսքեր են բերելու Պարսից ծոցից դեպի Սև ծով, Միջին Արևելքից, Թուրքիայից դեպի Ռուսաստան: Եվ այս դեպքում է, որ Հայաստանը, Ադրբեջանը տրանզիտային հսկայական եկամուտներ են ստանալու: Եվ եթե թույլ տրվի ասելու, այս ընդհանուր նախագիծն է, որ խաղաղության օրակարգի հիմք կարող է դնել, որովհետև հուզական մակարդակով շատ դժվար է, բայց մենք պետք է հասկանանք, որ խոսքն ուրիշ բանի մասին է, և տարածաշրջանային կոմունիկացիաների բացումն ի վերջո ոչ միայն տարածաշրջանի համար է, այլև աշխարհի՝ Արևելքի և Արևմուտքի, Յուրսիսի և Հարավի:



ՀՀ զինված ուժերը համալրվել է նոր ուղղաթիռներով

ՀՀ զինված ուժերի ավիացիան համալրվել է ժամանակակից, բազմաֆունկցիոնալ նոր ուղղաթիռներով, որոնք նախատեսված են դեսանտային, կրակային, տրանսպորտային և սանիտարական խնդիրներ կատարելու համար: Ռազմական նոր ավիացիոն տեխնիկայի ընդունման կապակցությամբ հունվարի 25-ին «Էրեբունի» օդակայանում անցկացվել է հանդիսավոր միջոցառում, որին ներկա է գտնվել ՀՀ ՇՈՒ գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանը: Բանակի կազմավորման

տարեդարձին ընդառաջ, շնորհավորելով անձնակազմին, գործառնալի և հրամանատարությունը վստահություն է հայտնել, որ օդային սահմանների պաշտպանները պատրաստ են կատարել առաջադրված խնդիրները և անսասան պահել երկրի օդային դարպասները: ՀՀ ՇՈՒ գլխավոր շտաբի պետին են ներկայացվել ուղղաթիռների մարտավարական-տեխնիկական բնութագրերն ու առանձնահատկությունները: Այս մասին հաղորդում է ՀՀ ՊՆ-ն:

Վարչապետի որոշմամբ ստեղծվել է Երասխի և Մեղրիի հատվածների երկաթուղու վերականգնման աշխատանքային խումբ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հունվարի 14-ին Հայաստանի Հանրապետության երկաթուղու Երասխ – Ադրբեջանի Հանրապետության սահման և Մեղրիի հատվածների վերականգնման ծրագրի աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին որոշում է ստորագրել: Այս մասին «Արմենպրես»-ը տեղեկացավ e-gov.am կայքէջից: «Համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության կա-

ռուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի N 564-Լ որոշման 1-ին հավելվածի 20-րդ կետի 5-րդ ենթակետի՝ 1. Հայաստանի Հանրապետության երկաթուղու Երասխ – Ադրբեջանի Հանրապետության սահման և Մեղրիի հատվածների վերականգնման ծրագրի աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով՝ ստեղծել աշխատանքային

խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի: 2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ եռամսյա պարբերականությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել տեղեկատվություն աշխատանքային խմբի կատարած աշխատանքների վերաբերյալ», – ասված է վարչապետի որոշման մեջ: Աշխատանքային խմբի ղեկավար է նշանակվել վարչապետի խորհրդական Արտաշես Թումանյանը:

Կառավարությունը 175 միլիոն դրամի օժանդակություն է տրամադրել Սյունիքի հյուրանոցներին

Անցած տարվա ընթացքում Սյունիքի հյուրանոցներում և հյուրատներում զբաղվածությունը որոշել է լրացուցիչ օժանդակություն տրամադրել ոլորտի տնտեսավարողներին: Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, Ազգային ժողովում կառավարության հարց ու պատասխանի ժամանակ այս մասին ասաց Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը՝ պատասխանելով «Զաղաքացիական պայմանա-

գիր» խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանի հարցին, թե վերջին շրջանում ինչպիսի՞ փոփոխություններ կան Սյունիքի մարզի հյուրանոցներին և հյուրատներին և որքա՞ն է այդ փոփոխությունների ծավալը: «Ինչպես գիտեք, Սյունիքում գտնվող հյուրանոցներն առանձնակի են տուժել կորոնավիրուսից և պատերազմի շնորհիվ, քանի որ նաև անվտանգային որոշակի դժվարություններ և խնդիրներ այնտեղ կար:

Սյունիքի հյուրանոցներում զբաղվածությունն այս տարվա ընթացքում բավարար չի եղել, և կառավարությունը որոշեց լրացուցիչ օժանդակություն տրամադրել Սյունիքի հյուրանոցներին, և այդ օժանդակության չափը կազմում է 175 միլիոն դրամ», – ասաց Քերոբյանը: Նախարարը նշեց, որ կառավարությունն ուշի-ուշով հետևում է իրադրությանը, ինչպես է զարգանում զբոսաշրջությունն ամբողջ Հայաստանում և հատկապես Սյունիքում՝ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ օժանդակություն կտրամադրվի: «Գիտե՞ք նաև, որ բավականին ակտիվ աշխատում է Սյունիքի հարցերով աշխատանքային խումբը: Այնտեղ անցած տարվա ընթացքում մեկ միլիարդից ավելի գումար է հատկացվել տարբեր նախագծերին, և աշխատանքներն այնտեղ շարունակվում են», – եզրափակեց Քերոբյանը: Ի

«Չանգեզուր» ժողովրդական պարային համույթը՝ մայրաքաղաքային բեմահարթակում



«Պարն այդպեսով է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ բարձր ու քաղաքակրթության աստիճանը»:

Կոմիտաս

Երբ Վահագն Գասպարյանին, որպես մեր գրույցի նախաբան, հարցրի, թե ի՞նչ է պարն իր համար, կարճ կապեց. «Պարն ինձ համար կենսակերպ է, աշխարհը ճանաչելու, աշխարհին հաղորդակցվելու փոխհարաբերություն»: Թեև երիտասարդ, բայց վաստակաշատ պարուսույցը երկու տարի է, ինչ յուրաքանչյուր շաբաթ այցելում է Կապանի պարի գաղտնիքների հաղորդակից դարձնելով իր հիմնադրած «Չանգեզուր» ժողովրդական պարային համույթի աստիճանը: Այդպես ժամանակ է, ինչ Կապանը նրա համար դարձել է հարազատ միջավայր՝ անկրկնելի բնութամբ ու մտերիմ մարդկանցով:

Վահագն Գասպարյանը նոր մարդ չէ պարարվեստում: Անդրանիկ քայլերն արել է «Սեբաստիա» մշակութային կենտրոնում չորս տարեկանից հաճախելով պարի խմբակ (առաջին ուսուցիչը՝ Լենա Խալաթյան), այնուհետև ընդունվել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի «Պարարվեստի ռեժիսուրա» բաժինը, որի ամբիոնի վարիչը Ֆրունզե Ելանյանն էր, կուրսընկեր՝ հանրաճանաչ Վանուշ Խանաբեկյանը, համալսարանն ավարտեց Կարեն Գևորգյանի ղեկավարությամբ (այժմ Հայաստանի պարարվեստի միության նախագահ): Բանակում ծառայելիս պարել է «Սարդարապատ» պարային համույթում (ղեկավար՝ Մուրադ Հակոբյան): Բուհի առաջին կուրսում սովորելիս էլ հիմնադրել է «Վալենս» պարային համույթը: Միայն «Վալենս»-ով չի սահմանափակվել նրա գործունեությունը: 2009-ից 12 տարի «Երևակ» կրթահամալիրում (հիմնադիր տնօրեն՝ Աննա Ստեփանյան) իր փորձն ու գիտելիքն է փոխանցել սկսնակ պարողներին: Նույն թվականին Հայաստանի թեմկույտի ֆեդերացիայի նախագահի հրավերով ֆեդերացիայում աշխատել է պարուսույց և երիտասարդներին ուսուցանել ազգային-

ուսուցանող պարեր՝ 2012 թ-ից աշխատել է «Սալաթիա» արվեստի դպրոցում՝ պարային բաժնի ղեկավար:

«Վալենս»-ն իր գործունեության ընթացքում շրջապատել է մի շարք երկրներում, ներկայացրել ու տարածել հայ ազգային և ժողովրդական պարերը՝ Բաթումի (Վրաստան), Չակոպանե (Լեհաստան), Ամման (Յորդանիա), Սուրբ Կոստանտին (Բուլղարիա), Բուխարեստ (Ռումինիա), Լիվո



Հայաստանը պետք է կապ ունենա Ղարաբաղի հետ

Սկզբը՝ էջ 1

Ադրբեջանական կողմն այդ ցուցակը ներկայացրել է, իսկ հայկական կողմը՝ ոչ», – ասաց Ռուսաստանի ԱԳ նախարարը՝ հավելելով, թե հայկական կողմն այդ ցուցակն ավելի ուշ է ներկայացրել, և այն ամբողջական չէր:

Լավորովը պնդեց նաև, թե հայկական կողմին վերադարձվել են բոլոր այն ռազմագերիները, որոնք մասնակցել են պատերազմական գործողություններին մինչև նոյեմբերի 10-ը, սակայն հետո ստեղծվել է նոր իրավիճակ, երբ ադրբեջանական կողմը գերեզմարել է 62 հայ զինվորականի, որոնք մասնակցել են Հաղորդի շրջանի հայտնի իրադարձություններին, և ադրբեջանական կողմն ասում է, թե քանի որ նրանք գերի են ընկել իրադարձարի հաստատուից հետո, սա արդեն նոր իրավիճակ է, որը կապ չունի նոյեմբերի 9-ին ստորագրված փաստաթղթի հետ:

«Այդուամենայնիվ, մենք՝ նախագահ Պուտինը և ես, առաջ ենք քաշում այս խնդրի կարգավորումը «բոլորը բոլորի դիմաց» սկզբունքի հիման վրա», – ընդգծեց Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը:

Հիմա պարզվել է, որ հայ գերիների թիվը շատ ավելի մեծ է, 62 չէ: Լավորովը հստակ թիվ չհնչեցրեց, բայց նրա այսօրվա հայտա-

րարությունից կարելի է եզրակացնել, որ հայկական կողմն այժմ արդեն ունի գերիների ճշտված ցուցակ, և ռուս խաղաղապահների հրամանատար գեներալ Մուրադովն անձամբ է զբաղվում այդ հարցով: Ավելի հստակ տեղեկություններ գերիների թվի և նրանց հնարավոր վերադարձի ժամկետների մասին Սերգեյ Լավրովը չհաղորդեց:

Ռուսաստանի արտգործնախարարն ասաց, որ իրադարձարի կետերը և՛ հայկական, և՛ ադրբեջանական կողմերը կատարում են, որ որևէ գաղտնի հավելված չի ստորագրվել նոյեմբերի լույս 10-ի գիշերը:

Հայ լրագրողը Լավրովին հարցրեց Ղարաբաղի կարգավիճակի մասին, և ի հակադրումն պաշտոնական Բաքվի այն պնդումներին, թե Ղարաբաղի հարցը վերջնականապես կարգավորված է և այն այլևս պատմություն է, պաշտոնական Մոսկվան այսօր ևս մեկ անգամ հայտարարեց, որ կարգավիճակի հարցը պետք է որոշվի ապագայում, և որ դրանով պետք է զբաղվի նաև ԵԱՀԿ Մինսկի խումբը:

«Հենց այն պատճառով, որ կարգավիճակի հարցն ամենաբարդն է, և կողմերի մոտ կա լուրջ տարածաշրջանային այդ հարցի շուրջ, երբեք ղեկավարները՝ Պուտինը, Փաշինյանը և Ալիևը, գիտակցաբար որոշել են այն շրջանցել և թողնել հարցի կարգավորումն ապագա-

յի համար, որով պետք է զբաղվեն այդ թվում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները», – ասաց Սերգեյ Լավրովը՝ հավելելով, թե համանախագահներն առաջիկայում կայցելեն տարածաշրջան:

Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը սրա հետ մեկտեղ խորհուրդ տվեց այսօր չխոսել կարգավիճակի մասին՝ համոզմունք հայտնելով, որ այն ավելի դյուրին կլինի կարգավորել, երբ իրավիճակը հանդարտվի, և Ղարաբաղում հայ և ադրբեջանական համայնքները կարողանան խաղաղ գոյատևել: Ղարաբաղի ադրբեջանական համայնքի մասին միայն այսօր ասաց Լավրովը, այլ մանրամասներ տվյալ թեմայով չհայտնեց:

Ղարաբաղն այս կամ այն ձևով Ռուսաստանի կազմում ընդգրկելու մասին հարցը Լավրովը «էկզոտիկ» համարեց, հերթական անգամ շեշտեց, որ Ղարաբաղի անկախությունը ոչ մի երկիր, այդ թվում՝ Հայաստանը, չի ճանաչել, և Արցախը Ռուսաստանի կազմում ընդգրկելու հարց «մոտիկ անգամ չկա» Մոսկվայի օրակարգում:

Բայանսը պահպանելու համար ասուլիսի մոդերատոր՝ Ռուսաստանի արտգործնախարարության պաշտոնական ներակայացուցիչ Մարիա Չախարովան հարցի իրավունքը փոխանցեց ադրբեջանցի լրագրողին, ով Լավրովին խնդրեց մեկնաբանել Հայաստանի արտգործնախարարի վերջերս կայացած այցը Ստեփանակերտ:

Բաբուն պարբերաբար պնդում է, թե Ղա-

(Ուկրաինա) և այլուր՝ արժանանալով մրցանակների:

Նախ իր ղեկավարած պարային համույթի անունն է հետաքրքրում «Վալենս»: Ինչ-որ օտար շունչ ունի իր մեջ, բայց պարզվում է՝ այդպես չէ: Այն հասկանալի է, որ ստացվել է իր անվան սկզբի երկու տառի Վա (հագն), առաջին ուսուցչի անվան երեք տառի Լեն (ա) համադրությամբ, Վալեն-ը մի տեսակ թերի էր, գունարվել է ս-ն (սեր) և վերջնադրույունքում Վալենս:

Ինչպե՞ս եղավ ծանոթությունը և համագործակցությունը Կապանի հետ. «Մտահոգումը Կապանի քաղաքապետ Գևորգ Փարսյանին էր և Կապանի մշակույթի կենտրոնի նախկին տնօրեն Գևորգ Հարությունյանինը: Վերջինս իմ ասան է եղել, պարել է «Վալենսում», հենց նրա հրավերով եկա Կապան և հիմք դրվեց «Չանգեզուր» ժողովրդական պարային համույթին: Այժմ «Չանգեզուրում» 80-ից ավելի ասն է ընդգրկված, արդեն որոշակի է դառնում պարային ձեռագիրը, իսկ այցեքարտը «Ուրնեցիների պար»-ն է, որում ներգրավված են տարբեր տարիքային խմբի երեխաներ»:

Կապանի Գարեգին Լոդեհի հուշահամալիրում Լեռնահայաստանի 100-ամյակին նվիրված տոնակատարության ժամանակ «Չանգեզուրը» հանդես եկավ հենց այդ պարով: «Չանգեզուր» համույթը գործում է բացառապես անվճար՝ համայնքապետի հովանու ներքո:

Մեր գրույցին ներկա էր Կապանի մշակույթի կենտրոնի տնօրեն, ժողովագարանների անսամբլի ղեկավար Վիգեն Հովհաննիսյանը. «Երբ Վահագնի հետ ծանոթացա, «Չանգեզուր» արդեն գործում էր, բայց դեռ ելույթներ չէր ունեցել: Տեսնելով նրա նվիրվածությունն աշխատանքին և անմասնորոշ կարգում ու մոտեցումը «Չանգեզուր» խմբին, մենք համագործակցության եզրեր գտանք, սկսեցինք փնտրել համապատասխան ստեղծագործություններ, որ մշակույթի կենտրոնի ժողովագարանների նվազակցությամբ Վահագնը կբեմադրեք»:

Ինչևէ, 2021թ. դեկտեմբերի 2-ը հիշարժան օր դարձավ պարուսույցի և արվեստի երկրպագուների համար. Նշվեց Վահագնի գործունեության և «Վալենս» պարային անսամբլի հիմնադրման 20-ամյակն ու «Չանգեզուր»-ի ստեղծման երկրորդ տարեդարձը:

Հրեյանյանի համերգի շրջանակում «Վալենսի» պարային ելույթները, հիրավի, իսկական տոն պարզեցին պարարվեստի սիրահարներին:

Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմահարթակում ելույթ ունեցավ նաև Կապանի մշակույթի կենտրոնի «Չանգեզուր» ժողովրդական պարի համույթը՝ մշակույթի կենտրոնի ժողովագարանների

Շարունակությունը՝ էջ 8

»

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռում ընդունեց Աշոտ Մինասյանի Պաշտպանության խորհրդի ներկայացուցիչներին

Հունվարի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Սյունյաց թեմի Թեմական խորհրդի ատենապետ, «Միսական» ջոկատի հրամանատար, գնդապետ Աշոտ Մինասյանի Պաշտպանության խորհրդի ներկայացուցիչներին՝ առաջնորդությամբ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Մակար վարդապետ Հակոբյանի:

Խորհրդի ներկայացուցիչները Լորին Սրբությունը ներկայացրեցին կալանքի մեջ գտնվող տիար

Աշոտ Մինասյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման իրավական գործընթացների մանրամասները՝ մտահոգություն արտահայտելով նրա առողջական վիճակի և կալանքի մեջ գտնվելու անհամատեղելիության առկայությամբ:

Լորին Սրբությունը, բարձր գնահատանքով անդրադառնալով տիար Մինասյանի հայրենակներ ու եկեղեցասեր գործունեությանը, միաժամանակ արձանագրեց, որ եկեղեցին զերծ է մնում իրավական գործընթացների միջամտություններից: Մայր Աթոռի սպասուհու է, որ դատավարական գործընթացներն իրականացվեն անաչառության ու բազմակողմանիության սկզբունքներով և



Նկատի առնվի նրա առողջական վիճակը: Լորին Սրբությունը նաև գնահատանք հայտնեց Պաշտպանության խորհրդին իրենց մարդասիրական նախաձեռնության համար:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձ կատարեց երկրի առջև

ծառայած մարտահրավերներին և տիրող իրավիճակին՝ աղոթելով, որ Տիրոջ օրհնությամբ ու համազգային ջանքերով հաղթահարվեն մեր ժողովրդին հուզող խնդիրները:

25.01.2022

Աշոտ Մինասյանը դատարանի որոշմամբ ազատ արձակվեց

«Միսական» ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանը (Աշոտ Երկաթ) ազատ արձակվեց կալանքից:

Դատարանի որոշմամբ՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխվեց՝ փոխարինվելով չհեռանալու մասին ստորագրությամբ:

26.01.2022

«Բացի իրանցի վարորդներից, չենք ունեցել դեպք, որ այնտեղով երթևեկեն հայկական մեքենաները», – Ազգային ժողովում լրագրողների հետ ճեպագրույցում ասաց ՊԵԿ նախագահ Ռուստամ Բաղասյանը՝ անդրադառնալով հարցին, թե Գորիս-Կապան ճանապարհով որ մեքենաներն են երթևեկում:

Անդրադառնալով աղբբեշանցիների տեղադրած մաքսակետին, Բաղասյանն ասաց, որ հայկական կողմն իրանական գրո մեքենան է կորցնում դրա հետևանքով, բանի որ մաքսագերծման գործընթացն սկզբից մինչև վերջ տեղի է ունենում 33-ում: «Մենք գրո մեքենան ենք կորցրել, որովհետև բոլոր մեքենաները մուտք են գործել 33 սահման՝ Մեղրիի անցակետով Ազարակ», – ասաց նա:

Ըստ Բաղասյանի՝ իրանական բեռնատարներն ավելի շատ տեղաշարժվում են Տաթև-Աղվանի ճանապարհով, իսկ եթե նախընտրում են Գորիս-Կապան ճանապարհը, ավելի գումար են ծախսում: «Մեր այլընտրանքային ճանապարհն ունի ճիշտ այն խնդիրները, որոնք ունեն ձեր վկայակոչած ճանապարհը: Բայց իմ գնահատմամբ, նաև հոսքը դիտելով, երեք անգամ անցնելով այդ ճանապարհով, ես համոզվել եմ, որ բեռնատարներն անցնում են: Ընդ որում՝ ամենամեծ ծավալ ունեցող բեռնատարներն անցնում են: Եվ եթե ՏԿԵ նախարարության բաղաբաղակալությունը հետևեք, խոսվում է նոր ճանապարհի մասին, որը կլինի, և այդ ոլորտներն ընդհանրապես կըջանան: Կարծում եմ՝ դրա շնորհիվ ամբողջությամբ հարցը կփակվի, և այնտեղով որևէ հոսք չի լինի», – ասաց Բաղասյանը: #

Արցախում գորակոչ լինելու է Արտակ Բեգլարյան

Արցախում գորակոչ լինելու է, ամբողջությամբ պայմանագրային զինծառայության անցնելու որոշում չկա: Այս մասին ասուլիսում ասաց Արցախի պետնախարար Արտակ Բեգլարյանը: Հարցին, որ



բանակը վերակազմավորվում է, և ամբողջ

ջությամբ պայմանագրային ծառայության են անցնելու, ե՞րբ է դա տեղի ունենալու, գորակոչ լինելու է, թե՞ ոչ, Արտակ Բեգլարյանը պատասխանեց:

«Ամբողջությամբ պայմանագրային զինծառայության չենք անցնում, որևէ նման որոշում չկա: Զորակոչ լինելու է, որևէ որոշում չկա հակառակ մասին վկայող: Այսինքն՝ ինչպես նախկինում եղել է գորակոչ, այնպես էլ տեղի է ունենալու Արցախի Հանրապետությունում: Երբ նման որոշում լինի, հայտարարվելու է, բայց նմանատիպ բեռնարկում էլ չկա, որ գորակոչ չլինի», – ասաց Բեգլարյանը: Ինչ վերաբերում է ոստիկանության գործերի վերաբերյալ բարեփոխումներին, Բեգլարյանն ասաց. «Ոստիկանական գործերը զբաղվելու են և ներքին անվտանգության պաշտպանության հարցերում, և նաև ըստ կարիքի՝ արտաքին անվտանգության հարցերում»: #

Պարտադիր զինվորական ծառայությունն ավարտած տղաներին պետությունը կաջակցի աշխատանք գտնելու հարցում


ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նախատեսում է իրականացնել Լորի ծրագիր, որի գլխավոր շահառուները լինելու են պարտադիր զինվորական ծառայությունն ավարտած տղաները: «Արմենայրես»-ի մասնով սրահում հրավիրված ասուլիսում այս մասին նշեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Լարեն Սկրտչյանը: Նախ գնահատվելու են նրանց կարիքները, հստակեցվելու են, թե կոնկրետ ինչ ուղղություններով հմտությունները զարգացնելու անհրաժեշտություն կա: Այնուհետև նրանք ներգրավվելու են վերապատրաստման ու հմտությունների զարգացման ամենատարբեր ծրագրերում: Համագործակցելով գործընկեր կազմակերպությունների, գործատուների հետ՝ աջակցություն է տրամադրվելու աշխատանք գտնելու հարցում: Մինչև ծրագրի մանրամասների կազմելը հստակեցվելու են նաև այն մեխանիզմները, որոնցով Հայաստանում գործող միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններն իրականացնելու են շահառուների կարիքների գնահատում: Նախարար Լարեն Սկրտչյանը նշեց, որ այս ծրագրի հիմքում Արցախյան պատերազմի մասնակից տղաների, հաշմանդամություն ձեռք բերած անձանց ուղղված աշխատանքներն են:

«Այդ աշխատանքներ մեզ ստիպեցին մտածելու մի նոր համակարգի մասին՝ հստակեցնելու, թե պարտադիր զինվորական ծառայությունն ավարտելուց հետո ինչ պետք է անի պետությունը, որ այդ տղաները վերա-

պատրաստվեն, զարգանան հմտությունները: Մենք հիմա աշխատում ենք այդ համակարգի վրա և եկող տարվա ծրագրերի մեջ են մտնում լայնամասշտաբ վերապատրաստումները: Իհարկե, այստեղ շատ կարևոր է կարիքների գնահատումը, հենց այդ գործընթացից են բխելու մեր հետագա անելիքները», – ասա Լարեն Սկրտչյանը:

Անդրադառնալով պատերազմի մասնակիցներին, ռազմական գործողությունների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց ուղղված աշխատանքներին՝ նախարարը նկատեց, որ այս տարի կառավարությունը հաստատեց մի ծրագիր, որով արդեն աջակցություն կցուցաբերվի 90-ականներից ի վեր, երբևէ տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց: Աջակցությունն ուղղված է ինչպես հաշմանդամություն ձեռք բերած անձանց աշխատանքի ընդունելու պարագայում միջավայրի հարմարեցմանը, այնպես էլ աշխատավարձից հաշվարկված եկամտային հարկի մինչև 100 հազար դրամ փոխհատուցմանը:

Նախարարը տեղեկացրեց, որ տարվա ընթացքում ակտիվ աշխատել են ինչպես մյուս գերատեսչությունների, այնպես էլ մասնավոր ընկերությունների հետ պատերազմի մասնակիցների հմտությունների զարգացման ու աշխատանքի տեղավորման նպատակով: «Նրանք իրոք կարող ուժեր են, պետք է նրանց հմտությունները զարգացնել ու հնարավորություն տալ աշխատաշուկայում դառնալ ակտիվ մրցույթ», – հավելեց նախարարը: #



Երկրաշարժ՝ Կապանից 12 կմ հարավ-արևելք

Հունվարի 16-ին, տեղական ժամանակով ժամը 07:25-ին (Գրինվիչի ժամանակով՝ 03:25-ին) ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության սեյսմոլոգիական ցանցի կողմից գրանցվել է հյուսիսային լայնության 39.14° և արևելյան երկայնության 46.52° աշխարհագրական կոորդինատներով Աղրբեշան-Հայաստան սահմանային գոտի՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքից 12 կմ հարավ-արևելք, օջախի 10 կմ խորությամբ, 4.3 մագնիտուդով երկրաշարժ:

Եպիկենտրոնային գոտում ստորգետնյա ցնցման ուժգնությունը կազմել է 5-6 բալ: Երկրաշարժը զգացվել է Սյունիքի մարզի Կապան քաղաքում և մի շարք գյուղերում՝ 4-5 բալ ուժգնությամբ, Վայոց ձորի մարզի Վայք և Եղեգնաձոր քաղաքներում, Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում՝ 3-4 բալ ուժգնությամբ:

16.01.2022

Կովկասի տարածաշրջանին ապագայում մեծ իրադարձություններ են սպասվում

2021 թվականի կարևոր իրադարձություններից է դարաբաղյան երկրորդ պատերազմի արդյունքների իրականացման սկիզբը, որն արմատապես փոխել է իրավիճակը տարածաշրջանում այն առումով, որ դրան մասնակցում էր նաև Թուրքիան: Անկարան հանդես է եկել որպես իրադարձությունների զարգացման հովանավոր: Այս մասին ղեկավարների 29-ին NEWS.am-ի հետ զրույցում ասաց ռուս քաղաքագետ, Մերձավոր Արևելքի և Կովկասի երկրների հիմնախնդիրների փորձագետ Ստանիսլավ Տարասովը:



Թվականի նոյեմբերի 9-ի հայտարարության մեջ նկարագրված տարբերակով, այդ հայտարարության գործնական իրականացում է ընթանում:

Յետագա զարգացումը ցույց տվեց, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա դժվարություններից և խնդիրներից հետո, ըստ փորձագետի, մերձեցում է տեղի ունեցել: Կանխատեսվում էր երկու երկրների արտգործնախարարները, ապա Ալիևն ու Փաշինյանը նախ՝ Ռուսաստանի միջնորդությամբ, ապա տարբեր ժամանակներում՝ Եվրամիության և Ֆրանսիայի նախագահի միջնորդությամբ բյուրոսներում:

«Դրան հաջորդեց Փաշինյանի սենսացիոն հայտարարությունն այն մասին, որ Ղարաբաղը միշտ եղել է արբեջանական տարածք: Սա նշանակում է, որ կողմերը մոտեցել են սահմանների սահմանազատման և սահմանազանման խնդրի լուծմանը և խաղաղության պայմանագրի նախապատրաստմանը, որը ենթադրում է երկու երկրների տարածքային ամբողջականության ճանաչում և կապված է Ղարաբաղի կարգավիճակի որոշման հետ:

Հայաստանը փաստացի դուրս եկավ դարաբաղյան խաղից: Ադրբեջանը կանգնած է խնդրի առջև, թե ինչ անել Ստեփանակերտում հայկական անկախի հետ: Սա ապագայի թեմա է: Ամենայն հավանականությամբ, մենք կսպասենք Ադրբեջանի նոր հայեցակարգային մոտեցումներին Լեռնային Ղարաբաղի հայերի ճակատագրի վերաբերյալ: Ռուս խաղաղապահները Ղարաբաղում են, Փաշինյանը լիովին հրաժարվել է դարաբաղյան օպերացիայից: Ղարաբաղի հայերի ճակատագիրը կորոշեն Մոսկվան և Բաքուն», - նշեց Տարասովը:

Ալիևի հայտարարությունն այն մասին, որ այսպես կոչված Չանգեզուրի միջանցքում մուտքի ռեժիմը պետք է լիովին նման լինի Լաչինի միջանցքի մուտքի ռեժիմին, փորձագետն անվանեց միայն հռետորաբանություն, բանի որ Չանգեզուրի միջանցքի խնդիրը լուծված է:

Նա վստահ է, որ Փաշինյանը պատրաստվում է հաղորդակցություն ստեղծել 2020

յում տարածաշրջանին մեծ իրադարձություններ են սպասվում:

«Բնականաբար, Միացյալ Նահանգներն այս ամենին ուշադիր հետևում է: Նոյեմբերի 9-ի հայտարարության ստորագրումից և տարածաշրջանում հաղորդակցությունների ապաշրջափակման կետերի որոշվելուց հետո պարզ դարձավ, որ առանց Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման այս ամենի իրականացումն անհնար է, և կողմերը սկսեցին շարժվել այս ուղղությամբ: Այլ բան է, թե ինչպես է դա արվում տեխնոլոգիական առումով», - ասաց Տարասովը:

Նա հիշեցրեց, որ նախ Երևանը խոսում էր առանց նախապայմանների այդ քայլին դիմելու պատրաստակամության մասին, ապա Ղարաբաղյան միջոցով սկսեցին ինչ-որ փակ դիվանագիտություն, որից հետո խնդրանքով դիմեցին Մոսկվային, այժմ նշանակվել են հատուկ ներկայացուցիչներ, շփումներ են պահպանվում հեռախոսով և այլն: Թուրքական կողմը մի գնահատական է տալիս իրավիճակին, հայկականը՝ բոլորովին այլ:

Անկարան ավելի մանրամասն լուսաբանում է գործընթացը, ինչը տարակուսանք է առաջացնում Երևանի վարքագծի վերաբերյալ: Ռուսաստանը, մյուս կողմից, բանավոր աջակցում է Հայաստանի և Թուրքիայի մերձեցմանը, սակայն չի զբաղվում միջնորդական առաքելության գործնական իրականացմամբ:

«Սկզբում Երևանը փորձում էր ինքնուրույն համաձայնության գալ թուրքերի հետ, ինչին հայ հասարակությունը դեմ էր: Հետո Փաշինյանն ասաց, որ Մոսկվան թույլ է տվել դա անել: Սակայն կարևոր է պատասխանատվություն չստանձնել և ինքնուրույն գործել», - ընդգծեց նա:

Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ Թուրքիան, ըստ փորձագետի, սկսում է իր խաղը Անդրկովկասում, ապա ԱՄՆ-ի և հայկական սփյուռքի հետ:

«Այս կապակցությամբ Վաշինգտոնը խորհուրդներ է տալիս դեպքում անհասկանալի է: Թուրքական կողմից հատուկ ներկայացուցիչ է նշանակվել պրոֆեսիոնալ դիվանագետ, ԱՄՆ-ում նախկին դեսպան, իսկ հայկական կողմից՝ կուսակցական, որին կօգնի պրոֆեսիոնալ դիվանագետները: Սա նշանակում է, որ բանակցությունները, որոնք Փաշինյանն ու Էրդողանը վարում են միջնորդների միջոցով, շատ բարդ են լինելու», - հավելեց Տարասովը:

ԱՄՆ-ն ամրագրում է Վիլսոնի արբիտրաժը և սկսում 44-օրյա պատերազմի հետաքննությունը

«Արդուս Վիլսոնի» կենտրոնի ղեկավար Արա Պասայանը կարծում է, որ Հայաստանի դիրքորոշման մեջ փոփոխություններ են եղել: Որպես օրինակ՝ նա նշում է ԱՄՆ Պետության պատմաբանների կայքում նախագահ Վուդրո Վիլսոնի արբիտրաժի ամրագրումը, որը չի հաջողվել իրականացնել 1920 թվականին՝ Հայաստանի թուրք-բուլղարական օկուպացիայի պատճառով:

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը ստորագրել է 2022 Ֆինանսական տարվա ԱՄՆ պաշտպանական բյուջեն, որի 1302-րդ կետը վերաբերում է հայ-ադրբեջանական հակամարտությանը: ԱՄՆ պաշտպանության բյուջեի մասին օրենքում ասվում է, որ ԱՄՆ պաշտպանության նախարարությունը փաստաթղթի ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 180 օր հետո պետք է Կոնգրեսին զեկույց ներկայացնի 2020 թվականի 44-օրյա պատերազմի մասին:

Զեկույցը պետք է ներառի ԱՄՆ-ի սպառազինության համակարգերի կամ տեխնոլոգիաների կիրառման գնահատական, հակամարտությունը փաստաթղթի դերակատարների ներգրավվածության մասին տեղեկատվություն, ներառյալ ռազմական գործողությունների, հարվածների, օտարերկրյա ռազմական տեխնիկայի վաճառքի նկարագրությունը, օտարերկրյա պետությունների



Դիմորդը միասնական քննություն կարող է հանձնել երկու անգամ

Հ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը մշակել է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգում փոփոխություններ կատարելու նախագիծը:

Ինչպես «Արմենպրես»-ին հայտնում են ԿԳՄՍ նախարարությունից, նախագծով սահմանվում է, որ դիմորդը տվյալ ուսումնական տարում միասնական քննություն կարող է հանձնել երկու անգամ: ՀՀ հանրակրթական, նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ տվյալ ուսումնական տարվա կամ նախորդ տարիների շրջանավարտները միասնական քննություններ կարող են հանձնել տվյալ տարվա հունվարին և հունիսին, իսկ հունվարին և մինչև հուլիսի 31-ը՝ զորացրվող դիմորդները, օտարերկրացիները, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների՝ տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ ՀՀ քաղաքացիները:

Միևնույն առարկայից երկու միասնական քննություն հանձնած դիմորդն անվճար կամ վճարովի ուսուցմամբ հայտարարված համապատասխան մասնագիտության մրցույթին մասնակցում է տվյալ առարկայի քննություն

նից ստացած առավել բարձր միավորով: Նշյալ և դրան առնչվող դրույթները (տվյալ տարվա ղեկավարների 15-ից մինչև ղեկավարների 25-ն ընկած ժամանակահատվածում հաջորդ տարվա հունվար ամսին քննությունների անցկացման մասով) ուժի մեջ կմտնեն 2022 թվականի սեպտեմբերի 1-ից հետո:

Հունվար ամսվա միասնական քննությունների հայտարարման և անցկացման ժամկետներն են՝

1) տվյալ տարվա ղեկավարների 15-25-ն ընկած ժամանակահատվածում դիմորդների՝ առավելագույնը երկու միասնական քննությունների առարկաների առցանց հայտագրում:

2) տվյալ տարվա հունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ն ընկած ժամանակահատվածում դիմորդների միասնական քննությունների կազմակերպում:

Կվանտակարգվեն ընդունելության միասնական չափանիշների սահմանումը և միևնույն մուտքային պահանջների համապատասխանությունը:

Նշվում է, որ որոշման նախագծի ընդունման արդյունքում կվանտակարգվեն նաև բուհերում նույն մասնագիտության (կրթական ծրագրի) համար ընդունելության միասնական չափանիշների սահմանումը և

միևնույն մուտքային պահանջների համապատասխանությունը՝ նկատի ունենալով նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ տվյալ մասնագիտության համար շրջանավարտին շնորհվող որակավորումը: Դիմորդը, կարևորելով մասնագիտության ընտրությունը և ուսումնասիրելով իր հնարավորությունները, լինելով ավելի մոտիվացված և նպատակասյաց, բուհ կընդունվի տվյալ մասնագիտությամբ (կրթական ծրագրով) ընդունելության առկա 2 քննությունների հանձնմամբ և անհրաժեշտ բազային գիտելիքներով, ինչը կնպաստի բուհերում ուսման որակի բարձրացմանը:

Նախագծով՝ 2022/2023 և 2023/2024 ուսումնական տարիների ընդունելության համար ամրագրվել են նաև «Արարտյան բակալավրիատ»-ի քննությունները՝ հաշվի առնելով ընթացիկ ուսումնական տարվա շրջանավարտների ակնկալիքները: Լրացվել է նաև առանց ընդունելության քննության ՀՀ կառավարության հատկացրած պահուստային տեղերի հաշվին բուհ ընդունվելու արտոնություն տվող օլիմպիադաների շարքը՝ ժառանգական, Մենդելեևյան և Մեգապոլիսների օլիմպիադաների շարքում ներառելով նաև Կիրառական կենսաբանության միջազգային օլիմպիադանը:

դիվանագիտական ներգրավվածությունը հակամարտությունից առաջ, ընթացքում և հետո, և հակամարտող կողմերի փորձերը՝ հավաքագրելու օտարերկրյա վարձկաններ կամ մասնավոր անձանց և ներգրավելու ռազմական կազմակերպություններին:

Բյուջեի տեքստում նշվում է, որ հակամարտող կողմերը պետք է կատարեն 2020 թվականի նոյեմբերի 9-ի համաձայնագրով և միջազգային իրավունքով ստանձնած պարտավորությունները՝ ներառյալ բոլոր ռազմագերիների և կալանավորված բաղաբացիական անձանց ազատ արձակումը:

Հակամարտության կողմերը պետք է ձեռնպահ մնան ուժի կիրառումից և դրա կիրառման սպառնալիքից՝ վիճելի հարցերին դիվանագիտական լուծումներ գտնելու համար: Նշվում է, որ ԱՄՆ-ը կհամագործակցի հակամարտող կողմերի հետ՝ կրկնապատկելով իր ջանքերը Միևնույն խմբի հովանու ներքո:

Բյուջեն ուժի մեջ է մտել, և վեց ամսից Կոնգրեսը պետք է լսի Պենտագոնի զեկույցը 2020 թվականի պատերազմի և պատերազմի ընթացքում օգտագործվող օտարերկրյա տեխնոլոգիաների, գրոհայինների և «երրորդ երկրների դիվանագիտական մասնակցության» վերաբերյալ:

Գյազբել-Արամազդի առեղծվածն ու խորհուրդը



Արաբի համար աստվածային խորհուրդ է անապատը, հայի համար՝ սարը: Արամազդի յուրաքանչյուրն իր դավանանքը ոչ մի բանի հետ չի էլ համեմատի, ինչ մնաց՝ թե փոխի: Մեր հայրենիքի 9/10 մասը՝ աստվածային չեղանակով սարերով, գերի մնաց ոտիսին: Գերի մնաց մեր սիրտ ու հոգի Արարատի հետ միասին, սար, որ համաշխարհային ջրհեղեղից փրկել է երկրագնդի մարդկությանը: Հիմա ինչքը գերի է, իսկ մենք՝ հայերս, առայժմ, ստիպված ենք բավարարվել այստեղի ունեցածով՝ Արագածով, Խուստուփով, Արամազդ-Գյազբելով՝ նրանց շուրջ հյուսելով հեքիաթային մեր երազանքներն ու ապագայի տեսլականները:

Հայոց աշխարհի մյուս սարերի նման Գյազբելն էլ իր առանձնահատուկ խորհուրդն ունի՝ հրաշք բնաշխարհով հանդերձ: Արամազդը գաղթական է՝ ծածկված լեռնամարգագետնային հարուստ բուսականությամբ:

Առուներ ծագել է հեթանոս հայերի Արամազդ (պահլավերեն՝ գերագույն իմաստություն) աստծո անունից:

«Առու էն՝ Գյազբել սարի ամենաբարձր տեղում մի ճեղքվածք կա, ուր ապրում են երկրի փերիները: Երբ սարերը թխսում են (անպամած են դառնում), նրանք դուրս են գալիս՝ իրար հետ կռվում մի տղայի համար, ով հաղթում է՝ մեկ տարով դառնում է տղայի կինը: Երկրի որոտը փերիների թերի ծայրն է, կայծակն էլ՝ նրանց թուրը»: (Աղբյուրը՝ Արամ Դանալյան, Ավանդապատում):

Ամեն ամռան չէ, որ նրա 3399 մ բարձրության լեռնագագաթի ձյունն ամբողջությամբ հալվում և հորդացնում է իր իսկ լանջերից բխող՝ արցունքի պես ջինջ մի քանի տասնյակ արցյուրները, որոնք սառնորակ ջուր են տալիս նրա փեշերից կախված բազմաթիվ բնակավայրերին, այդ թվում՝ Տաթևին, Սվառնային ու Տանձատափին, միաժամանակ կազմում Աղանձու և Սվարանցի գետակները, որոնք զվալելն իջնում ու Տանձատափի հինավուրց ջրաղացի թիկունքին իրար են խառնվում և անցնելով խորախոր կիրճերով՝ թափվում Որոտան գետ:

Իրականում կուսական են այստեղի մարգագետինները՝ անչափ գեղեցիկ և բուսական աշխարհով շատ հարուստ: Եթե մի ժամանակ (խորհրդային տարիներին) Գյազբելի լանջեր նախիրների և ոչխարների բազմաթիվ հոտեր էին բարձրանում, սարվորները՝ վրաններ դնում ու ավելի քան չորս ամիս բարձր որակի մթերքներ արտադրում, հնձվորներն էլ խոտի պաշար կուտակում ձմեռվա համար, հիմա այդ չքանաղ տարածքներում ողջ ամառվա ընթացքում որևէ կենդանի չկալի ոճվար է հանդիպել՝ չհաշված վայրի կենդանիները՝ արջ, եղնիկ, աղվես, գայլ և այլն:

Մի ժամանակ Գյազբելի քարափների պեղումներում նաև վայրի ոչխար կար: 1960-1970-ական թվականներին կատարված լայնածավալ երկրաբանահետախուզական աշխատանքներից հետո այդ կենդանատե-

սակն այլևս այդտեղ չի երևում: Առու էն, թե քաշվել, գնացել են դեպի Խուստուփ, որտեղ իրենց ավելի ապահով են գտնում: Ինչքանով է սա իրական՝ ոճվար է սառել, բայց հաստատ է, որ Գյազբելի վրա իրեն վտանգված է համարել, այլապես չէր հեռանա հեքիաթային վայրերից:

Բնաշխարհն այդտեղ իր փոթման գագաթնակետին է հասնում մայիսին: Սարն ուղղակի ծածկվում է հարկեզ-նարգիզների սպիտակամանուշակագույն գորգով, և այդ ծաղկուկները շուրջ մեկ ամիս բուրմուկ է արտաշնչում սրբազան վայրերին: Գյուղերի բնակիչները, հատկապես դարձյալան երեխաները, միշտ էլ մեծ սիրով փնջեր են կապում այդ ծաղիկներից՝ զարդարում իրենց տները, նաև նվիրում դրսից եկողների:

Գյազբելի անչափ հարուստ բնաշխարհը գերում է ամենքին, իսկ Սյունյաց աշխարհի մեծ քնարերգու Համո Սահյանին ուղղակի խենթացրել է.

«Պնամ Գյազբելիս զվրուխտով հարբեմ, ելնեմ երկնքստ ժայռերը նրա Եվ ներշնչանքս խորհուրդով չափեմ Արծալի ճախրանքը վիհերի վրա: Պնամ շուրթերը համբուրեմ նրա Շաղկկների մեջ ծվարած ձյունի Փռվեմ Գյազբելիս փեշերի վրա Ու խղճամ նրան, ով Գյազբել չուկի»:

Գյազբելի մասին խոսք են ասել նաև մեծն Ակսեյ Բակունցը և ուրիշներ:

Գարնանը շրջակա գյուղերի բնակիչներից ոմանք նրա լանջերից ավելուկ, սինդրիկ, իծիկոթ, բոխի, տարբեր տեսակի դեղաբույսեր, իսկ աշնանը՝ մատուր, կծուխուր (ծորենի), ներքեվի հատվածներից՝ հաղարջ և վայրի տանձ են հավաքում: Հատկանշական է, որ բարիքները ներկայացնելու, մատուցելու ժամանակ գյուղի բնակիչները պարտադիր ընդգծում են, թե Գյազբելից են հավաքել, որը նշանակում է՝ որակական առումով անմրցելի մթերքներ են: Եվ իրոք այդպես է:

Այստեղի մատուրը սովորականից առնվազն երկու անգամ խոշոր է, փշերից ու մազիկներից զուրկ ու ողորկ, որն այլ տեղերում չես հանդիպի: Սինդրիկի ու մյուս բանջարների մասին չեմ ասում, կարճ ասած, էլիտար են, անվիճելի: Լույսը նաև մնացած խոտաբույսերն ու դեղաբույսերն են:

Երկրաբան հետախուզողները Գյազբելի վրա աշխատել են բավական երկար: Ըստ հավաստի տեղեկությունների՝ նրանք հայտնաբերել են երկաթահանքի զգալի պաշարներ: Վերջերս մի լրագրային հրապարակումից իմացա, որ հանքի շահագործումը չի կատարվել խորհրդային Յայաստանի դեկավարների շրջափայտության շնորհիվ, որպեսզի այն մնա հաջորդ սերունդներին: Եվ այդ հեռատես որոշումը կայացվել է՝ նաև հայ ժողովրդի հանճարեղ զավակ Վիկտոր Համբարձումյանի խորհրդով:

Այնպես որ՝ Գյազբելը և՛ ներսից, և՛ դրսից համակ հարստություն է, և մեր հոգու ու սրտի հպարտությունը: Նա մեր հնամյա ժողովրդի անդամաճան ուղեկիցն է: Ինչեր ասես, որ չի տեսել հազարամյակների ընթաց-

քում, ու միշտ էլ թիկունք է եղել նրան: Չարմանալիս այն է, որ Գյազբելը միշտ կա որպես առեղծված ու անվերծանելի՝ նաև իր կրթին հազարամյակներով բնակվողների համար: Համոզված եմ միշտ էլ կմնա այդպիսին, թե չէ էլ ինչ Գյազբել...

Ժամանակին զուգընթաց, բոլոր սարերի նման, Արամազդն էլ ապրում է, շնչում, ենթարկվում փոփոխությունների, գրում կենսագրություն: Իրականում նա կենդանի օրգանիզմ է, բնական մյուս երևույթների նման ունի իր զարգացման ու գոյատևման օրենքները: Հիտորանալք, քանի որ այն մեր շոշափած թեման չէ, ուղղակի անորոշառնանք մի քանի անցուղարձի, որոնք տեղի են ունեցել Գյազբելի վրա՝ վերջին մի քանի տասնամյակներին, և, կարծում եմ, հետաքրքիր են ու հիշատակման արժանի:

Ինչպես սկզբում նշեցի, խորհրդային տարիների սարի արևելյան լանջին ամռանն արածում էին Տաթև, Սվարանց և Տանձատափ գյուղերի ավելի քան երկու հազար գլուխ խոշոր եղջերավոր անասունների նախիրներ ու մի քանի հազար գլուխ ոչխարների հոտեր: Մայիսից մինչև հոկտեմբեր անասնապահներն ու ֆերմաների մյուս սշխատողները լինում էին սարում: Չես ասի, թե նրանք համար ցանկալի պայմաններ կային, բայց նվազագույնը տնտեսություններն անում էին: Դրան էլ գումարվում էր Գյազբելի անզուգական բնաշխարհը՝ սառնորակ արցյուրները, հարուստ բուսականությունը, մաքուր զովաշունչ օդը և այլն, որոնք հանգստություն էին պարզում ֆերմաների աշխատողներին:

1960 թվականին Տաթևի կովաբուծական ֆերմայի գոտեխնկը երիտասարդ մասնագետ Վոլոդյա Արշակյանն էր: Հերթական անգամ, երբ գործերով Գյազբել պետք է բարձրանար, որոշում է հետը տանել նաև իրենց առաջնեկով հղի կնոջը՝ Նոյեմին: Նպատակ ուներ իր գեղեցկուհուն Գյազբելը ցույց տալ, նրա հետ 1-2 օր վայելել այդ գեղեցկությունները, զուգալ ջրերը:

Իմանալով այդ մասին՝ Վոլոդյայի մայրը՝ մեր Սառա մորաքույրը, ընդդիմացել է, թե հարսի ծննդաբերելու օրերը մոտ են, չի կարելի այդպիսի ռիսկի դիմել: Բայց որդի իրեն է պնդել, և առավոտյան սար զնացող ավտոմեքենայով զույգը բարձրացել է Գյազբել: Ամբողջ օրը Վոլոդյան և Նոյեմը շրջել են արցյուրներով, վայելել անարատ մթերքներ, հանգստացել իրենց ուզածով: Երեկոյան՝ սարվորների հետ զույցից հետո, ամուսիններով բաշվել են իրենց վրան՝ քնելու:

Գիշերվա կեսին հարսն իրեն վատ է զգացել և այդ մասին հայտնել է ամուսնուն: Ինչ պետք է անելին՝ սարում ավտոմեքենա չկար, իսկ ձիով անհնար էր հղի, ցավերի մեջ գտնվող Նոյեմին տեղափոխել գյուղ:

Երբ հեռու հորիզոնում արշալույսը սկսեց շառագունել՝ Գյազբելի լանջին՝ համակ անդորրի և խաղաղության մեջ լավեց նորածնի առաջին ճիչը:

Եվ ծայրը գնաց, գնաց բարձրացավ լանջերն ու բարափներն ի վեր՝ մինչև բարձրա-

բերձ գագաթ, այնտեղից էլ անցավ Աղոթան և արձագանքեց տիեզերքի խորքերում:

Ողջ Գյազբելը զարմանքի մեջ էր, նման իրողություն էլի էր եղել, թե ոչ, որևէ մեկը չէր կարող ասել, բայց այս մեկը կատարվել էր: Ծնունդն էլ ընդունել էր երիտասարդ հայրկը:

Այդ արշալույսը՝ 1960թ օգոստոսի 26-ի առավոտը, մինչ այդ եղածներից ոչ մեկի նման չէր: Արևը ոսկեգույն շողերով ներկել էր ողջ Գյազբելը, արցյուրների կարկաչը համակ երաժշտություն էր, ծաղիկները զմայլանքով նազում էին, չափ չկար սարվորների ուրախությանը:

Ծնողները նորածնին կոչեցին Սարմեն: Եթե փորձեք վերծանել՝ երևի կլինի սարի տղա, կամ սարի որդի, սարի զավակ և այլն, ուրիշ էլ ինչ:

Այդ օրվանից նա իր մեջ հավաքեց ողջ Գյազբելի խորհուրդն ու հզորությունը և հավատարիմ մնաց նրան: Ոսկե մեդալով ավարտեց Տաթևի Ս.Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցը, ապա կարմիր դիպլոմով՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտը և վերադարձավ հայրենի գյուղ: Հնարավորություն ունենալով աշխատանքի անցնել քաղաքներում՝ Երևան, Գորիս, Կապան և այլն, բայց հավատարիմ մնաց ծննդավայրին, և դա չխանգարեց, որ ճանաչվի Սյունիքի մարզի լավագույն թերապևտ, լավագույն ընտանեկան բժիշկ: Հանդիսանալով Տաթև համայնքի ու բնակավայրի ընտանեկան բժիշկ՝ բարձր պատասխանատվությամբ կատարեց այդ պարտականությունները՝ միաժամանակ հարստացնելով իր գիտելիքները ժամանակի բժշկական նորություններով: Ու դրանում նրան ոչնչով չխանգարեց գյուղաբնակ լինելը:

Ուժերի բուռն ծաղկման, անվան ու եղիկակության վերելքի, բուրբի կողմից՝ հատկապես բնակչության և բժշկական հանրության մեջ սիրված և լիարժեք ընդունված լինելու շրջանում՝ դեռ չբոլորած 48-ը՝ Սարմեն Արշակյանը մարտի 4-ին ցավալիորեն հեռացավ մեզից, իր հարազատ Գյազբել սարից:

Նա Գյազբելի հետ միասին թողեց իր անչափ բարի անունն ու նվիրական ծառայությունը հայրենի եզերքին, ու մի գեղեցիկ ընտանիք, որն իր օրինակով շարունակում է ծառայել մեր ժողովրդին:

Գյազբելի առեղծվածները վերծանել չի լինի, այնքան է հարուստ ու բազմազան, լի անակնկալներով, որ ոճվար թե որևէ մեկին հաջողվի լիարժեք տիրապետել նրա գաղտնիքներին: Ինչքան ամռանը սարը կանչող-հրավիրող է, հեքիաթային հաճույքներ պատճառող իր զովաշունչ բնաշխարհով՝ արցունքի պես ջինջ սառնորակ ջրերով, բնակերտ պատկերներով և այլն, ծնունդ, որը վրա է հասնում հոկտեմբերին, բազմապատիկ ցրտաշունչ է, հողմառատ և դաժան: Թվում է, թե նրա բարձունքներում ցրտաշունչ օրերին որևէ կենդանի շունչ չի կարող գոյատևել:

Բայց պարզվում է՝ այնքան էլ այդպես չէ: Որ գարնանամուտից մինչ աշուն սարի վրա որսորդ էր շրջում՝ բոլորին է հայտնի, բայց տեսք, որ ձմռանն էլ այդտեղ որսի գնացողներ են լինում:

Հիմա չգիտեմ, սար բարձրացողներ կա՞ն, թե՞ ոչ, բայց հին որսորդներից տաթևացի Բագրատ Հայրապետյանը ձմեռային որսի մասին ինձ մի պատմություն է արել:

– Շատ տարիներ առաջ էր: Նոր տարվա նախօրյակին երեք ընկերով գնացինք Գյազբել որսի: Փոսորակներում ձյունը շատ էր, բամբակ բարձունքներից հավաքել կուտակներ էր արել: Արևկող լանջերի մի մասը բաց էր, ձյուն չկար, մենք հենց այդ հատվածներում էլ պետք է որս փնտրեինք...

Երբ նրան հարցրի, թե ի՞նչ որս կարող էր հանդիպել, պատասխանեց.

– Հնարավոր էր բարայծ, բայց համոզված էիմք, որ ավելի շուտ արջի որսը կհաջողեր:

Հարցրի, մի՞թե ձմռանն արջերը խոր քուն չեն մտնում բերում, նա ասաց՝

– Ի՞նչ ես ասում, Գյազբելն այնպիսի արևկող լանջեր ունի, որ արևոտ օրերին արջերը դուրս են գալիս իրենց դաններից (որջերից) և պառկում արևի տակ ու ջերմանում: Իմ աչքով եմ տեսել՝ արջը մեջքի վրա պառկած արևկող է անում, այնպես էր հաճելի տաքից թուլացել, որ անգամ վերջույթների ճակերը բացվել էին, և երանելի հանգիստ էր վայելում:

Ապա նա շարունակեց իր պատմությունը: – Այդ օրը մեզ հետ դաժախտ պատա-

Գյազբեյ-Արամազդի առեղծվածն ու խորհուրդը

Սևիզբը՝ էջ 7

հար եղավ, և մենք այլևս որսի մասին չէինք էլ մտածում: Մեր երիտասարդ ընկերը, ով պակաս փորձով էր, ցանկացած մեծ թեթևության վրայի փոսորակն անցնել կուտակված ձյունի վրայով: Չգայրվ ձյունահոսքի վտանգ, հեռվից ձայն տվի նրան, որ այդպիսի ռիսկի չէիր: Նա ինձ չստեց, որոշել էր կարճ անցում անել, և չհասած փոսորակի կեսին, արևից ջերմացած ձյան մի խոշոր հատված պոկվեց ոտքերի տակից և նրան էլ իր հետ տարավ դեպի խոր ձորակ: Ձյունահոսքը նրա հետևից էլ շարունակվեց, և ձորը լցվեց ձյան հաստ շերտով:

Մեր շանքերը՝ աղետի ենթարկված երիտասարդին փրկելու ուղղությամբ, արդյունք չստացան: Մենք կորցրինք նրան: Նոր տարին էլ հարավ դարձավ մեր գլխին...

Այսպես էր, Գյազբեյի վրա որս անելն ամեն մեկի բանը չէ, հատկապես ծնունդ ամիսներին: Նման դեպքեր սարի վրա էլի եղել են, բայց մեկ է, էլի որսի գնալուց լինում էին: * * *

Մենակ ծնունդը չէ, որ Գյազբեյը վտանգներ ունի: Գարնան վերջին, ամռան անձրևոտ ու մառախլապատ օրերին այստեղ այնպիսի որոտներ են լսվում, և այնպիսի կայծակներ խաչվում, որ հատուկ է միայն Գյազբեյին:

Երկինքն ու երկիրն այդ պահերին խառնվում են իրար, քարափներն ու ձորերն ահից դողում են, ամեն կենդանի շունչ փորձում է գլուխը թաքցնել որևէ ապաստված խորշում: Փորձ ունեցող անասնապահները, երբ կանխագուժ են, որ եղանակը կարող է վատանալ, բարձունքներից անասունները ժամանակին իջեցնում են ցածի հովիտներ, որտեղ անհամեմատ որոտ-կայծակի վտանգը շատ ավելի պակաս է:

Ցավալի է, բայց այնպես է լինում, որ որոշ անասնապահներ չեն իմանում այս մասին կամ էլ թեթևամտորեն կարծում են, թե ոչինչ էլ չի պատահի, և վրա է հասնում աղետը:

2003 կամ 2004 թվականի ամռանը՝ ստույգ թվականը, օրը չեմ հիշում, հորդառատ անձրևից, որոտ-կայծակից հետո Սվարանց գյուղի խոշոր եղջերավոր անասունների մատուցող Նախարապետը՝ հերթն ավարտելուց հետո չի վերադարձել գյուղ: Նրան փոխարինողը բարձրացել է սար, հավաքել ցաթուցիկ եղած անասունների մի մասին, բայց անասնապահին

չի գտել: Գյուղից էլ մարդիկ են գնացել Գյազբեյ, երկար որոնումներից հետո բարձունքի մի նեղ հատվածում գտել են կայծակահարված մի բանի անասունի դի և գունդ ու կծիկ դարձած մի այրված ու մոխրացած գոյացություն:

Այդ ժամանակ ես, որպես Գորի-սի տարածաշրջանը սպասարկող դատախազ՝ դատաբժշկական փորձագետի, ոստիկանության բաժնի օպերատիվ խմբի հետ գնացել եմ դեպքի վայր: Այն, ինչ տեսանք, երբևէ մարդու մտքով չէր անցնի: Երկնային աղետն ինչ ուժով էր հարվածել, բանի հազար վոլտ լարումով՝ չես կարող ասել:

Անասնապահը՝ Սվարանցի բնակիչ Արթուր Գրիգորյանը, ով աղետի պահին փորձել էր պահել ինչ-որ տեղ ու չէր հասցրել, ձորակով իջնելիս կայծակի էպիկենտրոնում էր հայտնվել...

Այնպես որ՝ Գյազբեյի հետ չի կարելի կատակել: Այսպիսի վտանգը մեծ է նաև այն պատճառով, որ սարը երկաթահանք ունի ընդերքում: Մնացածն արդեն պարզ է... * * *

Իմ սերունդն արդեն, ինչ-որ չափով, առաջացած տարիք ունի: Երբ հետ ենք նայում լինելով բնաշխարհի սիրահար, տեսնում ենք, որ սարած տարիների ընթացքում ոչ կարգին շրջել, տեսել, ուսումնասիրել ենք այն, ոչ էլ բավարար օգտվել նրա բարիքներից: Կարծում եմ՝ մեզանից յուրաքանչյուրն իր սարած օրերի ծանրակշիռ մասը պետք է անցկացնի բնության գրկում, վայելի նրա բարիքները, ուղղակի ծովված լինի նրան: Սա կենսական անհրաժեշտություն է մարդու համար, չէ՞ որ ինքն էլ այդ բնության մասնիկն է: Մինչդեռ տեսնում ենք, որ հիմնականում լայն չափանիշով, մարդն օտարվել է նրանից: Ու նաև դրանով պետք է բացատրել մարդկանց ֆիզիկական ու հոգեկան որոշակի տկարությունը, զանազան հիվանդություններով հաճախակի տառապելը, և բազմաթիվ այն բացասական զարգացումները, որոնց ենթարկվում է նա: Մինչդեռ կարող ենք, և իհարկե լիովին պահանջված է, օր առաջ վերանայել այսպիսի վերաբերմունքն ու, ինչպես հարկն է, կապել բնությանը:

Առավել հետաքրքիր առօրյա դժվար է պատկերացնել, ինչու՞ մեզ լիովին չնվիրենք նրան՝ անզուգական բնաշխարհին, երկրի հնություններին, ընդհանրապես նրա պատմությա-

յանը: Այսպիսի կյուբի պաշար չափազանց շատ ունենք մեր երկրում ...

Նշվածի ուղղությամբ մեր «Այունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը բազմաթիվ խրախուսելի նախաձեռնություններ է արել և արդյունքները հրապարակել թերթի էջերում: Համաձայնեմ, որ դրանք արժեքավոր և շատ էլ պահանջված ու հետաքրքրություն շարժող կյուբեր են: Բայց նպատակս դրանց գնահատական տալը կամ վերլուծելը չէ: Ուշադրության արժանի է այն, որ Ս. Ալեքսանյանը՝ կատարած շատ հետաքրքիր շրջագայություններին ընդգրկում է ոչ միայն խմբագրության աշխատակիցների, դրանով հետաքրքրվողների, ընկերական, բարեկամական շրջապատի մարդկանց, այլ տանում է նաև իր անչափահաս թոռնուհիներին:

Պատկերացրե՛ք՝ 4.08.2019թ. նա իր Մարիամի ու Սոֆիի հետ բարձրացել է Արամազդի 3399մ բարձրության լեռնագագաթ և այնտեղից երեխաների աչքերով նայել Այունյաց լեռնաշխարհին, նրա հրաշք բնաշխարհին: Կարո՞ղ եք ավելի հաճելի ու բարձր ապրում պատկերացնել, երբ վերելք էլ հաղթահարել են ձիով ու ոտքով: Այս և ուրիշ երեխաների հետ գնացել են նաև Մեծ Իշխանասար, Ուխտասար և այլ բարձունքներ, պատմական հնավայրեր, կառույցներ, եղել անտառներում, բազմաթիվ այլ տեսարժան վայրերում: Սա այն է, ինչի մասին Նշեցի սկզբում բնաշխարհի հետ կապի մասին: Համոզված եմ, երեխաների մտածողությունը, մտահորիզոնը նման ակցիաների արդյունքում ոչ միայն ավելի են ընդլայնվելու, այլ շատ ու շատ ավելի է տալու նրանց ներաշխարհին:

Պատկերացրե՛ք՝ իրենց տարիքակիցներին մտ երեխաներն այդ մասին ինչ հպարտությամբ են պատմելու, ինչ նկարագրություններով... Եվ այդ կրակը կբորբոքեն մյուս երեխաների սրտերում նույնպես:

Անկեղծ եմ ասում՝ բարի նախանձով եմ նայում պարոն Ալեքսանյանի այդ արածներին, անչափ կարևոր ու բարձր եմ գնահատում այն, միաժամանակ ցավում, որ չեմ կարողանում մասնակցություն ունենալ նման շրջագայություններին:


Հնարավորություն ունեցողներին՝ հատկապես երիտասարդներին խորհուրդ եմ տալիս՝ մասնակցել այդպիսի ուղևորություններին, արշավներին և լիովին ըմբռնվել մեր անչափ հետաքրքիր բնաշխարհը, նրա աստվածատուր հմայքը:

Գնացե՛ք Գյազբեյ-Արամազդ... Ու հեթիաթներ հյուսե՛ք ձեզ համար:

ՍՈՒՐԵՆ ՎԱՐՄԱՆՅԱՆ

Աշոտ Ալեքսանյան. նրա կյանքը հոգու մի գեղեցիկ պատմություն էր...

Վերջին շրջանում, այս էլ որբերոջ անգամ, մորմոք է մաղվում Հարթիս գյուղի վրա... Հանգչել է մի սքանչելի եակ ևս, փվել է Աստծո մի գեղեցիկ արարած ևս՝ Աշոտ Լազրի Ալեքսանյան:



Վախճանը վրա է հասել 2022 թ. հունվարի 20-ի կեսօրին՝ Երևանի «Էրեբունի» բժշկական կենտրոնում տևական հիվանդությունից հետո:

Նրա ապրած 59 տարվա կյանքի ընթացքը գրեթե նույնն էր, ինչ իր ժամանակակիցներինը՝ միջնակարգ դպրոց, խորհրդային բանակ, մասնագիտության ձեռք բերում, ընտանիքի ստեղծում ու աշխատանք հայրենի գյուղում՝ մեխանիզացիա, դաշտավարություն, անասնապահություն: Բայց, այդ բոլորով հանդերձ, նրա կյանքն ավելի շատ հոգու մի գեղեցիկ պատմություն էր...

Աշոտ Ալեքսանյանի մարդկային ճախրանքն ու ծիանքը, սակայն, բեկվեց դեռևս տասնհինգ տարի առաջ: Դժվար է նույնիսկ վերհիշել, թե բանի-բանի անգամ է ստացիոնար բուժում ստացել Գորիսի և Երևանի հիվանդանոցներում, բանի-բանի անգամ է անհույս և անելանելի թվացող վիճակից՝ հրաշքով հարություն առել: Եվ անբուժելի հիվանդությանը դիմադրում էր, կարելի է ասել, ոչ միայն իր ֆիզիկական ամրությամբ, այլև հարազատների ու մերձավորների սրտաբուխ աղոթքներով ու օրհնություններով, իսկ ամենից առաջ՝ տիկնոջ բացառիկ հոգածությամբ:

Այն եզակիներին էր, ում հետ հանդիպմանը, ում մարդկային սրտառուց վերաբերմունքին և համով-հոտով զրույցներին սպասում էին ոչ միայն հարազատներն ու մերձավորները: Թեև խաթարված առողջությամբ էր, բայց մարդիկ նրա հետ ունեցած հանդիպումից հետոնում էին հզորացած, պարզաշրված, լավատեսությամբ լցված: Ցավը կով տալով ժախտ ու հույս էր բաշխում բոլորին և մտում բարությանը լեցուն:

Ու չնայած հազվադեպ էր տևից դուրս գալիս, բայց մեր ազգային կյանքի իրադարձությունների մեջ էր:

Հունվարի 10-ից հատկապես ծանրացավ նրա առողջական վիճակը, իսկ երեք օր անց Գորիսի հիվանդանոցից տեղափոխվեց մայրաքաղաքի «Էրեբունի» բժշկական կենտրոն. այդ ժամանակ այդտեղ իսկ կյանքի մեջ չկար, բայց և չէր հասել...

Նա հեռացավ՝ մեծ վիշտ պատճառելով թե՛ հարազատներին ու մերձավորներին, թե՛ համագյուղացիներին: Ցավոք, նրա տեղը լցնելու-լրացնելու հնար չկա, բանգի յուրաքանչյուր ոք մի աշխարհ է յուրովի: Կա միայն նրան շարունակելու հնարավորություն և անհրաժեշտություն, ինչն ակնկալում ենք նրա հարգարժան տիկնոջից ու երեք զավակից՝ որբան էլ սիրելի Աշոտի անժամանակ կորուստը գիշեր է բերել նրանց ներաշխարհին:

Հավատացած ենք՝ Աշոտ Ալեքսանյանի շունչն ու հիշատակն ապրելու են ոչ միայն հարազատների սրտերում, այլև ճանաչողների խոսք ու գրույցի մեջ, բանգի խոսքի վարպետ էր նաև՝ բնատուր, թեև վրա դարձած մտքերի հեղինակ: Ափսոս...

«Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Սամվել Ալեքսանյանին՝ սիրելի եղբոր՝ Աշոտ Ալեքսանյանի վաղաժամ մահվան կապակցությամբ: //

«Չանգեզուր» ժողովրդական պարային համույթը՝ մայրաքաղաքային բեմահարթակում

Սևիզբը՝ էջ 3

անսամբլի նվագակցությամբ (գեղարվեստական ղեկավար՝ Վիգեն Հովհաննիսյան):

«Ես շատ տպավորված եմ «Չանգեզուր» պարային համույթով, կարծում եմ մշակութային խիզախում է պահանջվում երկու տարում նման արդյունքի հասնելու համար, - Վահագն Գասպարյանին շնորհակալագիր հանձնելիս ասաց Հայաստանի պարարվեստի միության նախագահ Կարեն Գևորգյանը: - Վահագնին ճանաչում եմ այնքան, որբան

նրա ստեղծագործական գործունեության տարիներն են, նա այդ ընթացքում չդավաճանեց իր սկզբունքներին, մնաց որպես մշակութային անձնավորություն, իրեն անմաքուր չեղեց մանուկների գեղազիտական դաստիարակությանը» - հավելեց Կարեն Գևորգյանը:

Ի դեպ, նման մեծ կազմով կապանցիներն օպերային և բալետի բեմահարթակում հանդես էին եկել հինգ տասնամյակ առաջ...

Հոբելյանական երեկոյի ընթացքում

Վահագն Գասպարյանն արժանացավ հայ պարարվեստի միության «Նվիրյալ պարուսույց-մանկավարժ» հուշամեդալին՝ ազգային պարարվեստում ունեցած ներդրման և երկար տարիների գործունեության համար, Կասպանի համայնքապետ Գևորգ Փարսյանի գնահատանքին, ինչպես նաև համայնքապետարանի շնորհակալագրին, նույնպիսի շնորհակալագրի արժանացավ նաև Քաջարանի համայնքապետի կողմից: Իսկ վերջերս համայնքապետի կողմից պարգևատրվեց ՀՀ

կենտրոնական բանկի կողմից թողարկված «Կովկասյան ընծայում» արծաթե հուշադրամով: «Վահագն»՝ ռազմահայրենասիրական բարեգործական կազմակերպության կողմից արժանացավ «Վահագն ռազմի աստված» ոսկյա հուշամեդալով, «Երևակ» կրթահամալիրի կողմից արժանացավ շնորհակալագրի, և երկու պարող՝ կտավի: Եղան նաև այլ շնորհավորանքներ ու բարեմաղթանքի խոսքեր...

Վահագն Գասպարյանը երախտապարտ է Կասպան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանին, պարարվեստի միությանը՝ հանձնի Կարեն Գևորգյանի, «Երևակ» կրթահամալիրին՝ հանձնի Աննա Ստեփանյանի և բոլոր այն մարդկանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել համերգի կայացման գործում:

«Վախճան» կենսագրությունը շարունակվում է...

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Այունյաց երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՆ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ԴԱՏԱՍՊԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՐՄ Է 2003Թ. ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ **ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

3301, Այունիքի մարզ, ք. Կասպան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնել մեթոդագիր վիճակում:
«ԳՐՎԱԾԴ» - ԾԱՆՈՒՑՈՒՄ բաժնում

տպագրվող կյուբերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հոլմը «Այունյաց երկիր» պարտադիր է: © Նշանի տակ տպագրվում են գովազդային կյուբեր: Իսկ վերջերս Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 31.01.2022թ.: